ՀՏԴ : 929:39 (479.25) Լալայան + 39 (479.25)

ԵՐՎԱՆԴ ԼԱԼԱՅԱՆ. ԵՐԿԵՐ ՎԵՑ ՀԱՏՈՐՈՎ, ՀԱՏՈՐ ՉՈՐՐՈՐԴ, *(հատորը կազմ. և տպագր. պատրաստ. Ս. Գ. Հոբոսյանը), Երևան, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատ., 2021, 694 էջ*:*

Բանալի բառեր՝ Երվանդ Լալայան, «Երկեր», Սյունիք, Գեղարքունիք, Վայոց ձոր, ազգագրական և բանահյուսական նյութեր, հնագիտական ու ճարտարապետական հուշարձաններ, վիմագրեր:

Անվանի ազգագրագետ Երվանդ Լալայանը (1864–1931) ծնվել է Ալեքսանդրապոլում, ավարտել՝ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, սովորել՝ ժնևի համալսարանի հասարակագիտական բաժնում, որն ավարտելուց հետո աշխատել է Վիեննայի Մխիթարյանների մոտ և Փարիզի մարդաբանական դպրոցում: 1895 թ. վերադարձել է հայրենիք ու սկսել իր բանահավաքչական գործունեությունը:

Հայաստանի պատմաազգագրական շրջանների վերաբերյալ նրա հավաքած նյութերը տպագրվել են 1896–1916 թթ. իր իսկ հիմնադրած «Ազգագրական հանդես»-ի 26 հատորներում: Հանդեսը հրատարակվում էր որոշակի համակարգով. յուրաքանչյուր գիրք հիմնականում բաղկացած էր Հայաստանի որևէ գավառը կամ Կովկասի հայաբնակ շրջանը ներկայացնող ստվարածավալ ու համակողմանի նկարագրությունից:

Նկատի ունենալով Ե. Լալայանի հավաքած ազգագրական ու բանահյուսական նյութերի մեծ արժեքը՝ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտը նախաձեռնել է նրա գրավոր ժառանգության ամբողջական հրատարակությունը: Նշենք, որ «Երկերը» նախապես որոշվել էր հրատարակել հինգ հատորով, որից չորսում նախատեսված էին «Ազգագրական հանդես»-ում տպագրված նյութերը, սակայն հետագայում որոշումը վերանայվեց, և դրանք կհրատարակվեն վեց հատորով: Հինգ հատորում կընդգրկվեն «Ազգագրական հանդես»-ում տպագրված նյութերը, իսկ վեցերորդում՝ Ե. Լալայանի՝ ազգագրության, բանահյուսության, պատմության, հնագիտության և մշակույթի այլ բնագավառներին վերաբերող ուսումնասիրություններն ու հոդվածները, որոնք հրատարակվել են տարբեր պարբերականներում:

«Երկերի» չորրորդ հատորում զետեղված են Սյունիքի (Զանգեզուրի գավառ), Գեղարքունիքի (Նոր Բայազետի գավառ) և Վայոց ձորի (Շարուր–Դարալագյազի գավառ) նյութական ու հոգևոր մշակույթին վերաբերող նյու-

* *Ներկայացվել է 29. IX. 2022 թ., ընդունվել է տպագրության 09. XI. 2022 թ.:*

թերը, որոնք ժամանակին հավաքել են Ե. Լալայանն ու տեղի մտավորականները՝ նրա իսկ կազմած ծրագրով:

Ե. Լալայանն իր ուսումնասիրություններն սկսել է տեղագրությամբ ու վիճակագրական տվյալներով, անդրադարձել բնակավայրին ու բնակարանին, տնտեսական զբաղմունքներին, կենցաղային սովորություններին, ընտանեկան բարքերին, ուտեստին, տարազին, հավատալիքներին, տոներին և բանահյուսությանը: Հատուկ անդրադարձել է պատմական տեսությանը, որի համար օգտագործել է մատենագրական աղբյուրներ և ուսումնասիրություններ (Մ. Խորենացի, Փ. Բուզանդ, Ստ. Օրբելյան, Ղ. Ալիշան, Քաջբերունի և ուրիշներ): Ազգագրական նյութերը նա հավաքել է հետևյալ ծրագրով.

Բնակավայրեր. *հանգամանորեն ներկայացրել է դրանց աշխարհագրական դիրքը, շրջակա լեռներն ու ջրային ռեսուրսները, կլիման, կենդանական ու բուսական աշխարհը, հանքերը, լանդշաֆտային առանձնահատկությունները, հուշարձանները: Նշանավոր գյուղերն ու վայրերը նկարագրել է առանձին, գրանցել է դրանց առնչվող բանահյուսական, ազգագրական, հնագիտական տվյալները, շրջակա հուշարձանները և այլն:*

Բնակարան. *մանրամասն նկարագրել է տներն ու օժանդակ կառույցները, շինարարական յուրահատկությունները, սենյակները, կահ-կարասին, կատարված փոփոխությունները: Ուշադրավ է հատկապես Սյունիքին բնորոշ ժայռափոր տների (քրատակեր) և Նոր Գորիսի նորակառույցների, հնի ու նորի, եվրոպականի և ասիականի համադրությունը:*

Զգեստ և զարդ. *Ե. Լալայանը նշում է, որ փոքրիշատե ունևոր ընտանիքներում կանայք սովորաբար երկու ձեռք շոր էին ունենում՝ սովորական (լիավուր/տնամիջի) և տոնական (դանավուր/մարդամիջի): Նա նկարագրում է սեռատարիքային տարբեր խմբերի հագուստը, դրա ձևվածքը, գույնը, կտորի տեսակը, բաղադրիչները, հատուկ ուշադրություն է դարձրել գլխի հարդարանքին ու ոտնամաններին:*

Ընտանեկան կյանք. *մանրամասն և հաջորդաբար նկարագրում է ամուսնական տարիքը, աղջիկ ընտրելու, նշանադրության և հարսանյաց սովորությունների, պսակի և դրա հետ կապված արարողությունների, ծեսերի, հավատալիքների և նույնիսկ ծախսերի ամբողջ շղթան: Ամուսնությանը հաջորդում են տղաբերքի ու կնունքի, հիվանդության և բժշկության, մահվան, թաղման ու հիշատակի օրերի, հոգու և հանդերձյալ կյանքի մասին հավատալիքները, ծեսերն ու արարողությունները: Հատուկ ուշադրության են արժանացել ազգակցական, ինչպես նաև կանանց ու տղամարդկանց անունները:*

Տոներ. *Ե. Լալայանը հիմնականում անդրադարձել է կենցաղում առավել տարածված տոներին ու ծեսերին, դրանց հիմնական բաղադրիչներին՝ սրբավայր, ուխտագնացություն, նախնիների հիշատակ, խաղ, երգ, պար, ծիսական ուտեստ, մասնակիցների սեռատարիքային կազմ և այլն:*

Պաշտամունքային համակարգ. *մանրամասն անդրադարձել է լեռների, ջրերի, քարերի, կրակի, օջախի, բույսերի, կենդանիների, ֆիզիկական երևույթների, ոգիների պաշտամունքին, ինչպես նաև Հայկական լեռնաշխարհում հնագույն ժամանակներից պահպանված ու քրիստոնեությանը միաձուլված կրոնական ծեսերին և հավատալիքներին:*

Ազգագրական նյութերից բացի, Ե. Լալայանն առանձնակի կարևորել է հնագիտական ու ճարտարապետական հուշարձանները (Տաթև, Ծիծեռնավանք, Կեչառիս, Սևանա վանք, Գնդեվանք, Ցախաց քար, Նորավանք, Եղեգիս, Արատես և այլն)՝ նկարագրելով հուշարձանը, վիմագրերը և այլն: Նա առաջիններից էր, ով ձեռնամուխ եղավ վիմագրերի վերծանությանն ու հրատարակությանը: Նրա ընդօրինակած շատ վիմագրեր, որոնք չեն պահպանվել, այսօր ունեն սկզբնաղբյուրի արժեք և օգտագործվել են «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի՝ Սյունիքին, Գեղարքունիքին և Վայոց ձորին վերաբերող հատորներում:

Գիտական մեծ արժեք ունեն նաև Ե. Լալայանի հրատարակած լուսանկարներն ու չափագրությունները: 1904 թ. նա լուսանկարել է Վայոց ձորի նշանավոր վանական համալիրներն ու արձանագրությունները, սակայն մի ավազակախումբ դրանց նեգատիվներն ու այլ նյութեր գողացել է: 1908 թ. նշանավոր լուսանկարիչ Դ. Երմակովի հետ նա դարձյալ մեկնել է Վայոց ձոր: Այդ լուսանկարները նա օգտագործել է իր կազմած «Հայկական արձանագրություններ» խորագրով ալբոմում, որը 1914 թ. արժանացել է Մոսկվայի Լազարյան ճեմարանի Քանանյան մրցանակին:

Չնայած գրանցած արժեքավոր ազգագրական նյութերին՝ Ե. Լալայանը հայոց հիմնական տնտեսական զբաղմունքներին՝ երկրագործական և անասնապահական մշակույթին անդրադարձել է հակիրճ ու սեղմ, հաղորդել ընդհանրական տեղեկություններ՝ թերևս կարևորություն չտալով իր ժամանակի հանրահայտ իրողությանը, որի հետևանքով հայոց տնտեսական կենցաղի հիմնական զբաղմունքների մասին պատկերացումները թերի են:

Ե. Լալայանի «Երկերի» չորրորդ հատորը, ինչպես և նախորդները, ունի ծանոթագրություններ, անձնանունների և տեղանունների ցանկեր, նաև լուսանկարներ, որոնք բավականին կհեշտացնեն հետազոտողների աշխատանքը: Այս հատորում ևս պահպանվել է հեղինակի ոճն ու լեզուն, կատարվել են միայն մասնակի շտկումներ, հին ուղղագրությունը փոխարինվել է նորով, տպագրական ակնհայտ վրիպակներն ուղղվել են:

Ցանկալի կլիներ, որ Ե. Լալայանի «Երկերի» նախորդ, ինչպես նաև այս հատորն ունենար ռուսերեն և անգլերեն ամփոփագրեր, ուստի հուսով ենք՝ հաջորդ հատորներում այդ բացը կլրացվի:

Նշենք, որ Ե. Լալայանի խնդրո առարկա հատորը տպագրվել է բարերար Ռաֆիկ Կառլենի Սիմոնյանի հովանավորությամբ:

ԱՆԺԵԼԱ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնի գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ հայոց հավաքչական մշակույթը և նրա արդի դրսևորումները: Հեղինակ է շուրջ 20 հոդվածի: anjela.nersisyan.1969@mail.ru